



ՀԱՆԳԻՍ ՀՈԳԻՈՅ

ԶՈՐ ԴԱԻԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ

ԱԹՈՌԱԿԱՆ ՄԽԻՔԱՐԵԱՆ ՄԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Անցեալ տարւոյ Յունուարի 17ին
Բազմավիպիս Էջերը արձագանգ կու
տային Ս. Ղազարու վանքիս մէջ կա-



տարուած յորելեան հանդիսին՝ ի պա-
տիւ Ռւսաւմնաթերթիս աշխատակից
Հ. Դաւիթ վ. Նազարեթեանի յիս-
նամեայ լրման քահանայական օծու-
թեան և նորա գրական կեանքի նոյն-
քան աարեաց ընթացքին։ Ո՛չչափ
հեռու էր մեր մտքէն՝ որ տարի մը
վերջը՝ ճիշդ այդ օրուան տարեգար-
ձին՝ տեղի պիտի ունենար քազմար-
դիւն յորելենաւորին յուղարկաւորու-
թեան ախուր հանդէսը։

Կարծօրեայ՝ բայց անակնկալ բուռն
հիւանդութիւն մը շնչափողի բորբոք-
ման՝ ներգործելով սրաի տկարութեան
վրայ, յափշտակեց բժիշկներու խր-
նամքէն և Միաբանիցս իղձերէն և ա-
ղօթքներէն՝ հասարակաց սիրելի և
յարգելի ժիր ծերանին իւր 71 ա-
մեայ հասալին մէջ։

Գրել ընդարձակարար իւր կրօնա-
ւորական՝ քահանայական և գրակա-
նական ու մանկավարժական կենաց և
գործերուն վրայ՝ կրկնութիւն մը պի-
տի ըլլայ անցեալ տարւոյ մէջ ման-
րամասնօրէն գրածնուս, որոն կ'ու-
ղարկենք տողերուս ընթերցողն (Բազ-
մակիւպ 1910, էջ 84-88), համառո-
տիւ միայն յիշելով այստեղ՝ որ Հան-
գուցեալի ծնաւ ի կ. Պոլիս 1840ին,
աշակերտեցաւ վանքիս 1850ին, քա-
հանայ ձեռնադրուեցաւ 1860ին Յու-
նուար 17ին, Ս. Անտոն Աբբայի տօ-
նին օրը, զոր տարուէ տարի Աւիսս
շքեղ հանդիսով և ուժօրեայ պաշտա-
մունքով կը կատարէ, իբր տօն հիմ-
նագրի կրօնաւորական կենաց և Պաշ-
տպանի Միաբանութեան։

Դաստիարակութեան և առաքելու-
թեանց զբաղմունք՝ փափախակի յա-
ջորդութիւն մը կազմեցին իւր կեան-
քի տարիներուն. այսպէս կը տեսնենք
զինքը 1861-65 ուսուցիչ և օգնական
վերակացուի վանական աշակերտաց,
1865-69 ուսուցիչ և ուսումնապետ
վենեսուրց Ռափայէլեան վարժարա-
նին մէջ, 1869-79 վերակացու վան-
քիս աշակերտաց, 1880-85 Տեսուչ
Մուրաստ-Ռափ. վարժարանին, 1886
-91 կ. Պոլոյ մէջ ժողովրդապետ ի
Ռամաթիա, Հագեւոր-տեսուչ և գա-
սատու Համազգեաց Օրինորդաց Վար-
ժարանին, ուսուցիչ հայկաբանութեան
Ս. Գրիգ. լուսաւորիւ ուսումնարանին,
խմբագրապետ Պատկեր և անդամ կ. Պատրիարքա-
կան այլեւայլ ժողովներու; Ապա 1892-
99 վարեց Բերայի Միթթարեանց

Վարժարանին տեսչութեան և կ. Պոլսի Միմիթարեան Հարց Տեղակալ-Միհծառուի պաշտօնները, 1899ին կոչուեցաւ ի Փասոււա՝ իբր առ Ժամեայ Հոգաբարձու Համալարանական Հայ Ուսանուզաց իսկ 1901ին բնարուեցաւ ժողովրդապետ Նիկոմիդիոյ Հայ-կաթողիկեայց և քաղաքական մնարախիւխաս տեղւյն և շրջակայից ։ Յեաոյ 1903ին հրաւիրուեցաւ վենետիկ և բնարուեցաւ նախ Վանքիս վարչութեան խորհրդական անդամ, և յետոյ նաև Վանահայր Կամ Աթոռակալ Արհիապ. Արբանօր Ռէխտիս, և այդ պաշտաման մէջ կնքեց իւր մահկանացու արդիւնաշատ ընթացքը։

Կրօնական և կրօնաւորական եռանդով և բարձր ու բազմաթիւ առաքինութիւններով օժտաւած և զարգանած սիրելի և յարգելի եղան միշտ իւր կրօնակից եղբարց և բազմաթիւ զինքր ճանչցողներու, թէ ազգայնոց և թէ օտարազգեաց մէջ։

Համայնագիտական պատշաճ շափով տեղեկութեանց հետ՝ հմուտ էր՝ իբր մասնագէտ՝ գրաբար լիզուիս և մատենագրական գիտութեանց, քաջագէտ նաև խալերէն գաղղիերէն լեզուաց, ծանօթ լատին, գերմանական, անգլիական և օսմանեան լեզուներուն։

իւր բազմաթիւ գրազումներէն խընայած ժամանակը նուիրեց գրականութեան, ընծայելով ազգիս ինսամբով եղած թարգմանութիւններ ընտիր գրուածներու կեսար Քանդուի, Թարէի, Աէնդինի, Տը Լարբատի, Սէկիւրի և Տանդէի, այս վերջինիս Աստուածային կրտուակիրուքիւնն (La Divina Commedia) ամբողջապէս թարգմանած է գրաբար տաղաշափութեամբ, որ գեռ տպագրուած չէ, և ուսկից ճաշակ մը միայն հրատարակեց 1875ին Հատրնեաիր քերրուածք յԱստուածային Ցեսլարաւունն տիտղոսի ներքեւ Յիշածններէս զատ՝ ունի բազմաթիւ արձակ գրութիւններ և ոտանաւոր թարգմանութիւններ զանազան Հէղինակներէ բազմավիշիս տարիներուն մէջ, սրուն հրատարակութեան օգնական և խմբագիր ալ եղած է ժամանակ մը։

Ցաւոց և սպոյ զգացմանց հետ՝ իւր մահը կը թողու Միաբանութեանս մէջ ընտրելուգոյն և բարի օրինակ եղող կրօնաւորի և հոգեւոր հօր զգալի պակաս մը, զոր պիտի լիցնէ անշուշտ այժմեան երանական կեանքէն իւր հետեւրդներուն վրայ ազգած օրհնութիւններով։

8.

